ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Արայիկ ՖԻՐՅԱՆ
ԱրՊՀ ՖԴ և ՆԶՊ ամբիոնի ավագ դասախոս, հ.գ.թ.
E-mail: ara.firyan@mail.ru

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ՄՈԴԵԼԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների քննությունը բացահայտում է սահմանամերձ գոտու ազգաբնակչության կենսակայունության մակարդակի արդիականացման հիմնախնդիրը: <<Հոգեբանական պաշտպանական մեխանիզմ>> - <<կենսակայունության մակարդակ>> - <<արժեհամակարգ>> շղթայի բաղադրատարրերը գտնվում են փոխազդեցության մեջ: Այլ խոսքերով, հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հնարավոր է ներկայացնել ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների միջոցով և դիտարկել արժեքային համակարգի կառուցվածքում:

Բանալի բառեր՝ հոգեբանական պաշտպանական մեխանիզմ, արժեհամակարգ, կենսակայունության ցուցանիշ, հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդել:

А.Фирян

ФУНКЦИОНАЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА КУМУЛЯТИВНОЙ МОДЕЛИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЗАЩИТЫ

Рассмотрение механизмов психологической защиты раскрывает проблему модернизации уровня устойчивости жизнедеятельности национального населения приграничной зоны. Все компоненты «Механизма психологической защиты» находятся во взаимодействии. Иными словами, механизмы психологической защиты

можно представить через показатели жизнестойкости населения и проследить их в структуре системы ценностей.

Ключевые слова: психологический защитный механизм, система ценностей, индекс биоустойчивости, кумулятивная модель психологической защиты.

A.Firyan

FUNCTIONAL CHARACTERISTICS OF THE CUMULATIVE MODEL OF PSYCHOLOGICAL PROTECTION

Consideration of the mechanisms of psychological protection reveals the problem of modernization of the level of sustainability of the life of the national population of the border zone. All components of the "Psychological Defense Mechanism" are in interaction. In other words, the mechanisms of psychological protection can be represented through indicators of the resilience of the population and can be traced in the structure of the value system.

Key words: psychological defense mechanism, value system, bio-resilience index, cumulative model of psychological defense.

Հետևելով մի շարք հեղինակների կողմից ներկայացված ներգրավվածության, վերահսկողության և վտանգի ստանձնման կենսակայունության ցուցանիշների տարբերակման փորձին՝ ներկայացնենք մեր դիտարկումները այդ ցուցանիշների և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների փոխկապվածության մասին[1]:

Մադդիի կողմից տրվել է ներգրավվածության հետևյալ սահմանումը՝ որպես համոզմունք առ այն, որ ներկա սոցիալական գործունեության մեջ ներգրավվածությունը հնարավորություն է տալիս անձին գտնելու հետաքրքիր և սոցիալապես արժևորվող որևէ զբաղմունք[2]: Այսինքն՝ ներգրավվածության ցուցանիշի առկայության դեպքում անձը հաճույքով է

---

[1] *Տես՝ **Ղարագուլյան Ա. Լ.**, Ազատության հիմնախնդիրը փոխակերպվող հասարակությունում, անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ, պրակ 5, Երևան, 2008, էջ 23-35;*
*Տես՝ **Hakobyan N., Khachatryan** A., Structure of Person's Psychological Resources in Emergency Situations (April 4, 2018). Proceedings of the 9th International RAIS Conference on Social Sciences and Humanities, Available at SSRN: https://ssrn.com/abstract=3179044 or http://dx.doi.org/10.2139/ssrn.3179044*

[2] *Տես՝ **Maddi, S.R**. Personality theories: a comparative analysis Homewood, Ill: Dorsey Press, 1968.*

իրականացնում իր սոցիալական գործունեությունը և բացի դրանից՝ իրեն մասնակից և պատասխանատու է զգում հանրային կայունության ապահովման գործում: Այս խնդրին անդրադարձել են նաև մի շարք հեղինակներ, որոնք ներկայացրել են հիմնախնդրի առանձնահատկությունները սոցիալական անոմիայի համատեքստում[1]:

Վերահսկման ցուցանիշը ներկայացնում է կենսակայունության ընդհանուր համակարգի կամային բաղադրիչը, այն է՝ անձի կողմից ձևավորվում է համոզմունք առ այն, որ ինքը ունակ է դիմակայելու արտաքին միջավայրի անցանկալի կամ շրջադարձային պայմաններին և կառուցելու գործունեության սեփական ռազմավարությունը: Նշենք Ջ. Ռոթերի տեսության հետ այս ցուցանիշի հարակից լինելը: Այն դեպքում, երբ Ջ. Ռոթերը ներկայացնում է վերահսկողության արտաքին և ներքին ուղղվածության տարատեսակները (լոկուսները)՝ որպես անձի գործունեության արդյունքների նկատմամբ արտաքին (սոցիալական) կամ ներքին (սեփական) ուժերի պատասխանատվության դրսևորում, կենսակայունության համակարգի բաղադրիչ հանդիսացող վերահսկման ցուցանիշն իր մեջ է ներառում այդ երկու գաղափարները միաժամանակ: Մանրամասնենք այդ դիտողությունը:

Ջ. Ռոթերի թեզը միավորում է վերհսկողության և պատասխանատվության եզրույթները, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում առանձնացնել դրանց արտաքին և ներքին տեսակները, իսկ մեր կողմից մատնանշվող վերահսկողության եզրույթը ներկայանում է, առաջին հերթին, անձի կամային դրսևորումներոով, ինչի արդյունքում կարելի է շեշտը դնել անձի հոգեբանական կայունության՝ որպես կենսակայունության արտահայտություններին և վերահսկողության գաղափարը դիտարկել անձի արժեքային համակարգի ենթատեքստում[2]:

Վտանգի ստանձնման ցուցանիշն առավել արդիական է սահմանամերձ գոտու ազգաբնակչության կենսակայունության բնութագրման տեսանկյունից: Այդ ցուցանիշն արտահայտվում է անձի կենսափորձից դուրս բերվող այն գիտելիքի և հմտությունների կուտակման մեջ, որը կարևորվում է անձի զարգացման և արտաքին միջավայրային

---

[1] *Տես՝ **Hakobyan N., Gevorgyan S., Petrosyan L., Khachatryan A.**, The Problem of Personal Development in the Context of Social Anomie Wisdom. 22 (2), 7-14.*

[2] *Տես՝ **Աղուզումցյան Ռ. Վ., Ամիրյան Ս. Ս., Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Խաչատրյան Ն. Գ., Հովհաննիսյան Հ. Ռ., Հարությունյան Ն. Ա., Սարգսյան Դ. Յ.**, Հոգեկան հուսալիության հետազոտման մեթոդաբանական մոտեցում: Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը, Երևան, 2009, էջ 113-131:*

պայմաններին հարմարման գործընթացում: Հատկանշական է, որ անձի կենսակայունության բարձրացման տեսանկյունից կարևորվում է ինչպես դրական, այնպես էլ բացասական փորձի առկայությունն ու արժևորումը:

Այժմ ներկայացնենք սահմանամերձ գոտում ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների արդյունավետ մոդելի ձևավորման առանձնահատկությունները, որոնք նպաստում են կենսակայունության ցուցանիշների ամրապնդմանն ու արժեքային համակարգում դրանց ամրակայմանը: Մեր կողմից մեխանիզմների գործարկման այդ մոդելը բնութագրվում է արտահայտման կումուլյատիվ բնույթով. այն դրսևորվում է երկար ժամանակահատվածում արժեքային համակարգի վրա հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ազդեցության կուտակման և կենսակայունության ցուցանիշների միջոցով արտահայտման մեջ: Այդ երևույթը մեր կողմից նկատվել է ներքոնշյալ մեթոդների, հարցազրույցի և դիտարկումների իրականացման ու վերլուծման ընթացում, այն է՝ հոգեբանական պաշտպանության որոշ մեխանիզմների դրսևորումները նպաստում են կենսակայունության մակարդակի արտահայտմանը, ինչն իր հերթին արտահայտվում է արժեհամակարգում: <<*Հոգեբանական պաշտպանության մեխանիզմ կենսակայունության մակարդակ արժեհամակարգ*>> շղթայի բաղադրատարրերը գտնվում են փոխազդեցության մեջ, այսինքն՝ արժեհամակարգում ազգային կոնսոլիդացիայի, անկախության և վերահսկման դրսևորումները, որոնք նախկինում հոգեբանական պաշտպանության որոշ մեխանիզմների և կենսակայունության ցուցանիշների արտահայտության արդյունք էին, տարիների ընթացքում իրենց հետքն են թողնում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների վրա՝ էլ ավելի ուժեղացնելով դրանց հետագա ազդեցությունը շղթայի մյուս բաղադրատարրերում: Մեր կարծիքով, կումուլյատիվ մոդելի շղթայաձև փոխկապվածությունը նպաստում է, որ Արցախի ազգաբնակչության շրջանում տարիների ընթացքում նկատելի դառնա ազգային ինքնագիտակցության, հոգեբանական ընդհանուր նկարագրի կառուցվածքում դրական կոնստրուկտների կուտակման երևույթը:

Նշենք նաև մոդելի կոմպենսատորային բնույթի մասին: Կոմպենսացիան այն հոգեբանական մեխանիզմն է, որն արտահայտվում է անձի գործունեության որոշակի ուղղվածությամբ՝ որպես անձի թերությունների և թույլ կողմերի քողարկման և ուժեղ կողմերի ներկայացման ռազմավարություն: Սահմանամերձ գոտում կոմպենսացիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմի դրսևորումների քննությունը

թույլ է տալիս եզրակացնելու կոմպենսացիայի ցուցանիշի կուտակման հետևյալ եղանակների մասին՝

1. գործունեության այն բնագավառներում, որոնք առնչվում են վտանգի արդիականացմանը (օրինակ՝ զինծառայության ժամանակահատվածը, հակամարտության հնարավոր վերսկսման ակնկալիքը), նկատվում է դիմադրությունն ու պաշտպանությունը ապահովող միջոցների հասանելիության և կատարելագործման միտվածություն;
2. գործունեության վերոնշյալ բնագավառների պարագայում ուժեղանում է սոցիալական ինստիտուտների կարևորությունը, որոնց վրա է դրվում վտանգին դիմակայելու պատասխանատվությունը, ինչի արդյունքում անձը հոգեբանորեն ձերբազատվում է ինքնապաշտպանության մեխանիզմների իրագործումից և իր ակտիվությունն ուղղում դեպի սոցիալական կամ մասնագիտական գործունեության այլ բնագավառներ[1]:

Նշված վարքագծային տարբերակներից երկուսի դեպքում էլ նկատվում է պաշտպանական հատկանիշների ուժեղացման ռազմավարությունը՝ տարբեր ուղղվածությամբ[2]: Առաջին դեպքում պաշտպանական հատկանիշների ուժեղացումն արտահայտվում է ուղղակիորեն՝ վտանգին դիմակայելու միջոցների կատարելագործման շնորհիվ: Այդ եղանակը գիտակցվում է անձի կողմից, արտահայտվում է պաշտպանական ունակությունների կուտակմամբ՝ զբաղմունք ուժային սպորտաձևերով, զենքի տիրապետման գիտելիքի ձեռքբերում, հակամարտ կողմի վերաբերյալ տեղեկատվության նկատմամբ հետաքրքրության աճ, <<որքան շատ գիտես թշնամու մասին, այդքան ավելի պաշտպանված ես>> սկզբունքի կիրառում և այլն: Երկրորդ եղանակի կիրառման պարագայում պաշտպանական հատկանիշների ուժեղացումն արտահայտվում է անուղղակի միջոցներով. սեփական պաշտպանական ակտիվությունը փոխարինվում է պետական կառույցների արդիականացմամբ և ժողովրդավարական ինստիտուտների առաջնահերթության գիտակցմամբ [3]:

Ինչպես ցույց տվեցին փորձարարական հետազոտության արդյունքները, Արցախի սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում առավել արտահայտված է կոմպենսացիայի պաշտպանական մեխանիզմի

---

[1] *Տես՝* ***Чешев В. В****. Поведенческая и деятельностная адаптация: общее и особенное // Вестн. Томского гос. пед. ун-та (Tomsk State Pedagogical University Bulletin). 2012. Вып. 4. с. 230–234.*

[2] *Տես՝* ***Hakobyan N., Khachatryan A.****, Socio-Cultural Interpretation of Person's Psychological Resources in Emergency Situations, - Main Issues Of Pedagogy And Psychology, 2020, 17(1), 65-82.*

[3] *Տես՝* ***Леонтьев Д.А.****., Современная психология мотивации, М., 2002, 343 с.*

կուտակման երկրորդ եղանակը, երբ հոգեբանական անվտանգության և պաշտպանության բարձր մակարդակը ձեռք է բերվում ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման արդյունքում և հետևանք է հասարակության ընդհանուր ժողովրդավարացման և պետական կառույցների ամրապնդման գործընթացների[1]: Այս եղանակի արտահայտություններից են նաև անձի արժեքային համակարգում հոգեբանական պաշտպանության ինստիտուցիոնալ դրսևորումները, որոնք արձանագրվում են պետության նկատմամբ վստահության ամրապնդման, ուժային կառույցների գործունեության դրական գնահատականի և բարեկեցության մակարդակի բարձրացման տվյալներով:

Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի կառուցվածքն է (Գծապատկեր 1)՝

Գծապատկեր 1. Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ սպիրալաձև մոդելի կառուցվածքը



Ներկայացնենք հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի բաղադրիչները (Աղյուսակ 1).

[1] *Hakobyan N., Khachatryan A., Vardanyan N., MARGINALITY AND ETHNO-CULTURAL ENVIRONMENT, - Paradigmata poznani, 2018, 3, 44-51.*

Աղյուսակ 1.Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի բաղադրիչները

Հոգեբանական պաշտպանության մեխանիզմներ (ըստ Ռ. Պլուտչիկ-Հ. Քելլերմանի դասակարգման)	**Կենսակայունության ցուցանիշներ (ըստ Դ.Ա. Լեոնտև-Ե. Ի. Ռասկազովայի դասակարգման)**	**Արժեքային համակարգի բաղադրիչներ (ըստ Մ. Ռոկիչի դասակարգման)**
Պրոյեկցիա	Վտանգի ստանձնում	**Տերմինալ արժեքներ**
Իրականության ժխտում	Ներգրավվածություն	Կոնկրետ / վերացական
Արտամղում	Վերահսկում	Մասնագիտական ինքնառեալիզացիայի / անձնական
Ռացիոնալիզացիա		**Ինստրումենտալ արժեքներ**
Ռեակտիվ կազմավորում		Էթիկական / հաղորդակցման / աշխատանքային
Ռեգրեսիա		Անհատական / կոնֆորմիստական / այլտրուիստական
Տեղափոխում		Ինքնահաստատման / այլակենտրոն
Կոմպենսացիա		

Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ներկա պատկերն ունի որոշակի յուրահատկություններ թե՛ արտահայտման միջոցների և թե՛ արժեքային համակարգում արտահայտվածության առումներով: Վերջին 10 տարիների ընթացքում մեր կողմից անցկացված ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու այն մեխանիզմները, որոնք վկայում են ազգաբնակչության կենսակայունության մասին և առավել հաճախ են ներկայանում արժեքային համակարգի բաղադրիչների շարքում: Այդ մեխանիզմների <<գործառութային երկարակեցությունը>> կրում է կումուլյատիվ բնույթ, քանի որ այդ մեխանիզմների արդիականությունը ձեռք է բերվում

սահմանամերձ միջավայրում հոգեբանական պաշտպանության ձևերի ժամանակագրական կուտակման շնորհիվ, ինչի արդյունքում պաշտպանության մեխանիզմները ոչ միայն վերածվում են ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների, այլև ամրապնդվում են արժեքային համակարգում:

Այսպես, 2015-2018 թթ. ընթացքում կատարած դիտարկումների և հավաքագրված նյութերի հանրագումարը թույլ է տալիս խոսելու հոգեբանական պաշտպանության մեխանիզմներից ռեգրեսիայի և ռեակտիվ կազմավորման դրսևորումների տարածվածության մասին: Արդեն այդ տարիներին գրանցված արդյունքները, սակայն, ցույց տվեցին կոմպենսացիայի և ռացիոնալիզացիայի գործառության նկատվող աճը: Իսկ 2014-2019 թթ. ընթացքում իրականացված հոգեբանական հետազոտությունը բացահայտեց ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի ամրակայման միտվածությունն ու այդ մեխանիզմների գործարկման պայմաններում կենսակայունության ցուցանիշներից վտանգի ստանձնման, ներգրավվածության և վերահսկման կայուն դրական զարգացումը: Բացահայտվեց նաև Արցախի Հանրապետության տարածքում (անկախ պետական սահմանին մոտ կամ հեռու գտնվելու տարածական տարբերություններից) բնակվող արցախահայության գնահատականներում հանրապետության ողջ տարածքը սահմանամերձ գոտի համարելու միտումը, ինչը բացատրվում էր գերազանցապես պատերազմի մասին կուտակված հիշողություններով և ապագայում հավանական պատերազմի վերսկսման պարագայում հանրապետության բնակչության համընդհանուր մոբիլիզացիայի մտավախությամբ:

Արցախի Հանրապետության ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության պատկերն աչքի է ընկնում տարիների ընթացքում կուտակված մեխանիզմների այնպիսի համադրմամբ, որոնք առավելագույնս նպաստում են սահմանամերձ գոտու պայմաններում կենսակայունության պահպանմանն ու ամրապնդմանը[1]: Ուստի կենսակայունության ցուցանիշները դրսևորվում են ոչ միայն պաշտպանության մեխանիզմների միջոցով, այլև կազմում են արժեքային համակարգի բովանդակային մասը: Պաշտպանության մեխանիզմների գործառութային երկարակեցության այսպիսի պատկերին մենք տվել ենք *հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդել* անվանումը. այն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

---

[1]Տես՝ ***Հակոբյան Ն. Ռ.,*** *Մարգինալություն և հոգեբանական հարմարում, Երևան, 2009 թ.:*

1. սահմանամերձ գոտում հոգեբանական պաշտպանության մեխանիզմներից առավել արտահայտված են կոմպենսացիան, ռացիոնալիզացիան և ռեակտիվ կազմավորումը:

2. հոգեբանական պաշտպանության մեխանիզմների գործարկումն ուղեկցվում է, մի կողմից, կոնֆլիկտային իրավիճակում ներգրավվածության գիտակցմամբ, մյուս կողմից՝ խաղաղ աշխատանքի մեջ ներգրավվածությամբ:

3. հոգեբանական պաշտպանության մեխանիզմները սահմանամերձ գոտում կրում են գերազանցապես կոմպենսատորային բնույթ:

4. վերը նշված ներգրավվածության հատկանիշի երկակի ընկալումը բնորոշ է սահմանամերձ գոտում ազգաբնակչության կենսակայունության պատկերին:

5. կենսակայունության ցուցանիշներից ներգրավվածության ընկալման երկակիությունը համադրվում է կենսակայունության մեկ այլ՝ վտանգի ստանձման ցուցանիշի հետ այնպես, որ խաղաղ աշխատանքի մեջ ներգրավվածությունը միաժամանակ շարունակում է աճել վտանգի արդիականության հետ մեկտեղ:

6. կենսակայունության վերը նկարագրված ցուցանիշների արտահայտություններն ուղեկցվում են վերահսկման լոկուսի տիրապետմամբ: այլ խոսքերով, սահմանամերձ գոտու ազգաբնակչության մեջ կենսակայունության առավել արտահայտիչ ցուցանիշը վերահսկումն է, որն ինքնին հանդես է գալիս որպես հոգեբանական պաշտպանական մեխանիզմ:

7. սահմանամերձ գոտու ազգաբնակչության արժեքային համակարգի բաղադրիչներից առավել կայուն արտահայտված են ինքնավերահսկման և անկախության արժեքները:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Արցախի Հանրապետության անկախության ստեղծման պատմական փաստով նախանշված սոցիալ-հոգեբանական իրավիճակի և տարիների ընթացքում սահմանամերձ գոտում գոյատևելու կուտակված փորձի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու հոգեբանական պաշտպանության համապատասխան մեխանիզմների մոդել, որը նպաստելու է սոցիոմետ դիրքորոշումների զարգացմանն ու վարքագծի արտահայտմանը: Սահմանամերձ գոտում բնակվող արցախահայության հոգեբանական պաշտպանության մեխանիզմներն ազգաբնակչության կենսակայունության ընդհանուր պատկերի մաս են կազմում և առանձնանում են արժեքային համակարգում համապատասխան ցուցանիշների կումուլյատիվ դրսևորմամբ:

Գրականություն

1. **Աղուզումցյան Ռ. Վ., Ամիրյան Ս. Ս., Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Խաչատրյան Ն. Գ., Հովհաննիսյան Հ. Ռ., Հարությունյան Ն. Ա., Սարգսյան Դ. Յ.**, Հոգեկան հուսալիության հետազոտման մեթոդաբանական մոտեցում: Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը, Երևան, 2009:
2. **Հակոբյան Ն. Ռ.**,Մարգինալություն և հոգեբանական հարմարում, Երևան, 2009 թ.:
3. **Ղարագուլյան Ա. Լ.**, Ազգատության հիմնախնդիրը փոխակերպվող հասարակությունում,-Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ, պրակ 5, Երևան, 2008:
4. **Hakobyan N., Gevorgyan S., Petrosyan L., Khachatryan A.**, The Problem of Personal Development in the Context of Social Anomie Wisdom. 22 (2).
5. **Hakobyan N., Khachatryan A.**, Socio-Cultural Interpretation of Person's Psychological Resources in Emergency Situations, - Main Issues Of Pedagogy And Psychology, 2020, 17(1), 65-82.
6. **Hakobyan N., Khachatryan A.**, Structure of Person's Psychological Resources in Emergency Situations (April 4, 2018). Proceedings of the 9th International RAIS Conference on Social Sciences and Humanities, Available at SSRN: https://ssrn.com/abstract=3179044 or http://dx.doi.org/10.2139/ssrn.3179044
7. **Hakobyan N., Khachatryan A., Vardanyan N.**, MARGINALITY AND ETHNO-CULTURAL ENVIRONMENT, - Paradigmata poznani, 2018, 3.
8. **Maddi S.R.**, Personality theories: a comparative analysis Homewood, Ill: Dorsey Press, 1968.
9. **Блюм Г.**, Психоаналитические теории личности М., 2000.
10. **Ãëàäêèõ À.Ã.** Ñâÿçü æèçíåñòîéêîñòè ñ ðàçëè÷íûì âèäàìè èíòåëëåêòà // Ïñèõîëîãèÿ XXI âåêà: Ìàòåðèàëû X Ìåæäóíàð. Ìåæâóçîâñêîé íàó÷.-ïðàêò. êîíô. / Ïîä ðåä. Á.Â. ×åñíîêîâà. ÑÏá., 2007.

11. **Леонтьев Д.А.,** Современная психология мотивации, М., 2002.
12. **Чешев В. В.**, Поведенческая и деятельностная адаптация: общее и особенное // Вестн. Томского гос. пед. ун-та (Tomsk State Pedagogical University Bulletin). 2012. Вып. 4.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը։